

ԲԱՆԱԽՈՍ

1999 05 26

ԹԻՎ 27

1999 05 13

ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԽԱՉԱՏՈՒՐ ԲԵԶԻՐՉՅԱՆ

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախկին նախագահ, Կառավարման դպրոցի տնօրեն

Ժողովրդավարական ցանկացած երկրում ընտրությունները ժողովրդավարության ամենակարևոր տարրերից են: Անգամ ոչ ժողովրդավար երկրներում այսօր ընտրություններ են կազմակերպվում: Կան ընդհանուր մշակված սկզբունքներ, որոնք ամրագրված են Սարդու իրավունքների հռչակագրով, ՀՀ սահմանադրությամբ: Ըստ դրանց, բոլոր քաղաքացիները հավասար իրավունք ունեն մասնակցելու իրենց երկրի կառավարմանն անմիջականորեն կամ իրենց ընտրած ներկայացուցիչների միջոցով, ուստի պարբերաբար պետք է անցկացվեն ընտրություններ: Այդ սկզբունքների հիման վրա կազմվել է ՀՀ ընտրական համակարգը:

Ներկայումս գործող ՀՀ ընտրական համակարգի հիմքերը դեռևս գալիս են խորհրդային շրջանի օրենքից, որից ժամանակի հետ գնալով հեռանում ենք: Խորհրդային փուլում, մինչև 1988 թվականը ընտրությունները կրում էին ձևական բնույթ: Մինչ այդ մեկ թեկնածուի պայմաններում, պատգամավորներն ընտրվում էին 99,8% ձայներով, ավելի ճիշտ՝ նշանակվում էին: Այս եղանակը գործում էր բոլոր մակարդակներում, սկսած ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրություններից, մինչև շրջանային ու տեղական խորհուրդների ընտրությունները: 1988 թվականին ընտրական օրենքը գործեց, և ընտրություններն անցան մեկից ավելի թեկնածուի առկայությամբ: Վերջին գորբաչովյան շրջանում, գործեց ժողովրդական



պատգամավորների համագումարը, որի մեկ երրորդը՝ 750 պատգամավոր, ներկայացնում էին հասարակական կազմակերպությունները: Մնացած 1500 պատգամավորները պետք է ընտրվեին: Հասարակական կազմակերպությունները գտնվում էին կոմկուսի ղեկավարության ազդեցության ներքո, և այդպես էր արված, որպեսզի առնվազն կուսակցական ներկայացուչականությունն ապահովված լիներ: Ըստ այդ օրենքի, ընտրությունները երկու փուլային էին: Առաջինը բացարձակ մեծամասնական էր. պատգամավորը համարվում էր ընտրված, եթե ստանում էր ընտրատարածքի ընտրողների ընդհանուր թվի 50%-ից ավելի ձայներ: Բնական է, եթե իրական ընտրություններ լինեին, այդքան ձայն դժվար էր հավաքել: Ընդ որում, կար նաև քվորումի գաղափարը. ընտրությունները կայացած համարվելու համար դրանց պետք է մասնակցած լինեին ընտրողների 50%-ից ավելին: 1989թ. խորհրդային Միությունում ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրությունները չկայացված համարվեցին Երևանի Սովետական շրջանում: Այն ժամանակ Մոսկվայում ասում էին, թե Երևանի

Սովետական շրջանն ամենահակասովետականն է Սովետական Միությունում: Իսկ բոլորովեցին այդ ընտրությունները, որովհետև մի քանի թեկնածուների չէին գրանցել, այդ թվում՝ Գալինա Ստարավոյտովային:

Հետագայում անհրաժեշտություն առաջացավ փոփոխություններ մտցնել ընտրական օրենքում: Այն ժամանակ տարբեր մակարդակի ընտրությունների համար կային տարբեր օրենքներ, իսկ նախագահի ընտրության համար ընդհանրապես օրենք չկար. այդ ինստիտուտն ավելի ուշ հաստատվեց: Եթե խորհրդային շրջանում պատգամավորության թեկնածուներին առաջադրում էին աշխատավորական կոլեկտիվներն, ապա այս կարգը պետք է փոխվեր, որովհետև աշխատավորական կոլեկտիվների անդամներից շատերը տվյալ տարածքի բնակիչները չեն և հարկ չկար քաղաքականացնել հիմնարկ-ծեռնարկությունները: Մտցվեց ստորագրահավաքի համակարգը. Հայաստանի ԳԽ պատգամավորության թեկնածու առաջադրվելու համար հարկ էր հավաքել 200 ստորագրություն: Փոխվեց նաև հանձնաժողովների կազմման կարգը: Եթե նախկինում առաջարկները գալիս էին դարձյալ աշխատավորական կոլեկտիվներից, ապա նոր կարգով ընտրողները կարող էին հանձնաժողովներ կազմել ըստ բնակչության վայրի: Դա անցումային շրջանն էր: Այլ փոփոխություններ ևս եղան: Նոր կարգով ընտրված լինելու համար արդեն պահանջվում էր հավաքել ոչ թե բոլոր, այլ ընտրությանը մասնակցածների ձայների 50%-ը:

Այսպիսով պահպանվեց բացարձակ մեծամասնական ընտրության երկու փուլային ձևը, սակայն ընտրություններին մասնակցածների թվի համեմատությամբ 50%-անոց քվորումի գաղափարը նույնպես պահպանվեց: 1990-95թթ. կային բազմաթիվ ընտրատարածքներ, որտեղ քանիցս ընտրություններ էին անցկացվում, սակայն, քվորումի բացակայության պատճառով ընտրությունները չէին կայանում:

«... Այսօր էլ ՀՀ ընտրական օրենսգրքում կարելի է տեսնել բազմաթիվ թերություններ, իրար հակասող դրույթներ:»

Հետագայում սահմանվեց Հանրապետության նախագահի պոստը և ընդունվեց նախագահի ընտրության մասին օրենքը: 1995թ. Աժ ընտրություններից առաջ դարձյալ փոփոխություններ կրեց Ազգային ժողովի պատգամավորների ընտրության մասին օրենքը: Մասնավորապես, Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները կազմավորեցին խորհրդարանում ներկայացված պատգամավորների խմբերը. յուրաքանչյուր տասը պատգամավոր կարող էր առաջադրել համապատասխան հանձնաժողովներում մեկական անդամ: Հանձնաժողովների կազմավորման կարգը շատ կարևոր է, որովհետև, երբ հանձնաժողովները չեզոք չեն, այդ հանգամանքը կարող է միշտ իր դերը խաղալ: Իհարկե, դրական կլինե՞ր ունենալ անկողմնակալ անդամներից կազմված չեզոք հանձնաժողովներ: Շատ երկրներում այդ փորձը կա: Վերադաս հանձնաժողովները կազմված են լինում դատական իշխանության ներկայացուցիչներից կամ պետական ծառայողներից: Տեղամասային հանձնաժողովները սովորաբար կազմվում



Խաչատուր Բեգիրջյանը ծնվել է 1950 թվականին, Երևանում:

1974թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը:

1974թ.-1976թ ծառայել է բանակում՝ որպես սպա:

1978-80թթ. եղել է Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Մոլեկուլյար

Կենսաբանության ինստիտուտի ասպիրանտ:

1977, 1981-87թթ. աշխատել է ՀԳԱ Մոլեկուլյար Կենսաբանության ինստիտուտում՝ որպես գիտաշխատող:

1987-91թթ. եղել է Ամինաթթուների տեխնոլոգիական-գիտահետազոտական ինստիտուտի կենսաքիմիայի լաբորատորիայի վարիչ:

1990թ.-ին ընտրվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի փոխնախագահ:

1991-94թթ. եղել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ:

1993-94թթ. եղել է ԵԱՀԿ Ավագ պաշտոնյաների կոմիտեում Հայաստանի մշտական ներկայացուցիչ:

1990-95թթ. եղել է Երևանի քաղխորհրդի պատգամավոր:

1990-95թթ. եղել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, անկախ, պետականության և ազգային քաղաքականության հիմնական հանձնաժողովի փոխնախագահ:

1996-99թթ. եղել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը:

1996-99թթ. Հայ-Բրիտանական խորհրդարանական խմբի նախագահն է:

1997-99թթ. ԵԱՀԿ 1995-99թթ. Աժ Խորհրդարանական վեհաժողովի Մարդու իրավունքի և մարդասիրական հարցերի ընդհանուր հանձնաժողովի անդամ է:

1998-99թթ. Հայաստանի Եվրամիության համատեղ հանձնաժողովի համանախագահ:

1994-ից ՀՀ Կառավարման դպրոցի տնօրեն է:

Ամուսնացած է, ունի 2 երեխա:

են տեղական իշխանությունների կողմից: Հանձնաժողովի անդամներն այդ աշխատանքի համար վարձատրվում են և շահագրգռված են լինում ընտրությունների արդար անցկացման համար: Այդ դեպքում նրանք հնարավորություն են ստանում հետագայում ևս հրավիրվելու մասնակցել հանձնաժողովների աշխատանքներին: Եվրոպական շատ երկրներում ընտրությունները կազմակերպում է ներքին գործերի նախարարությունը, քանի որ վերջինս համակարգում է քաղաքապետարանների, տեղական իշխանությունների գործունեությունը: Անգամ կա ընտրությունների հատուկ բաժին այդ նախարարությունում, ինչպես նաև մասնագիտություն՝ ընտրություններ կազմակերպող ադմինիստրատոր: Շատ երկրներում վերադաս հանձնաժողովները ունեն միայն վերահսկողական և ընտրությունների արդյունքները ամփոփողի ֆունկցիա:

«Ցավոք, մեր կուսակցությունները և հասարակությունը չեն հասել այն մակարդակին, որ քաղաքական ծրագրերի մրցույթ լինի:»

Հետագայում մեզ մոտ հարկ եղավ դարձյալ փոփոխել ընտրական օրենքները, բոլորը միացնել, քանի որ տարբեր օրենքների հիմքում դրված էին տարբեր մեխանիզմներ: 1995թ. հետո մենք ունեինք երեք՝ նախագահի, տեղական իշխանությունների և ԱԺ պատգամավորների ընտրությունների մասին օրենքները: Պատրաստվեցին օրենսգրքերի մի քանի նախագծեր: Քանի որ հեղինակները քաղաքական գործիչներն էին, հիմնականում քննարկվում էին զուտ քաղաքական հարցեր: Տեխնիկական, կազմակերպչական հարցերը մնացին ստվերում: Հեղինակներին ավելի շատ հետաքրքրում էր, թե ինչպիսին պետք է լինի խորհրդարանը, քանի տոկոսը համամասնական, քանիսը՝ մեծամասնական եղանակով ընտրված: Քանի որ հանձնաժողովները պետք է լինեին ոչ չեզոք՝ կուսակցության ներկայացուցիչներից կազմված, հեղինակներին ավելի շատ հետաքրքրում էր, թե ինչպես անել, որ գերակշռություն ունենալ: Այլ հարցեր օրենսդիրներին, կարծես, թե չէր հուզում, և այսօր էլ ՀՀ ընտրական օրենսգրքում կարելի է տեսնել բազմաթիվ թերություններ, իրար հակասող դրույթներ: Դրանք մեծ դժվարություններ են առաջացնում հանձնաժողովների աշխատանքների համար: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ստիպված է որոշակի մեկնաբանություններ տալ օրենքի երկմաստ շատ դրույթների համար:

Նոր օրենսգրքով ԱԺ պատգամավորների ընտրության համար ընտրված է մեկ փուլային համակարգ: Սա աշխարհում շատ հայտնի և տարածված եղանակ է: Փաստորեն, մայիսի 30-ին՝ հենց առաջին փուլից հետո, մենք կունենանք լրացված խորհրդարան: Այս համակարգի դրա-

կանն այն է, որ մեկ փուլից հետո ամբողջ խորհրդարանը համալրվում է և միանգամից կարող է գործել: Այն ստիպում է կուսակցություններին միավորվել, գնալ խոշորացման: Որպես թերություն դիտվում է այն, որ ընտրված պատգամավորը կարող է չներկայացնել տվյալ տարածքի ընտրողների մեծամասնությանը, նա կարող է հաղթել, ասենք, 15-20% ձայներով: Այս համակարգը մոտ գաղափարախոսություն ունեցող կուսակցություններին կստիպի համախմբված գնալ ընտրությունների: Ներկա գործող համակարգում վերացված է քվորումը:

Հանձնաժողովները կազմվում են հետևյալ կերպ. Կենտրոնական և մարզային ընտրական հանձնաժողովներում նախ ներկայացուցիչներ ունեն այն հինգ խմբակցությունները, որոնք կան Ազգային ժողովում և, եթե նրանք հավաքել են առնվազն 30000 վավեր ստորագրություն: Մնացած ութ անդամներից երեքին նշանակում է կառավարությունը, իսկ հինգ տեղը համալրվում է այն կուսակցությունների կողմից, որոնք ամենաշատ ստորագրություններն են հավաքել և ոչ պակաս, քան 30000 վավեր ստորագրություն: Սկսվում է ստորագրահավաքի մի մրցավազք, իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դրանք ստուգելիս կանգնում է մեծ դժվարությունների առջև: Ըստ գործող օրենքի, ԿԸՀ-ն պետք է ստուգի ստորագրությունների 2%-ը, ինչը կազմեց մոտ 65000 ստորագրություն, ընդ որում, Հայաստանի ողջ տարածքով: 20 անդամ ունեցող հանձնաժողովը, որը տրոհվում է խմբերի, հնարավորություն չի ունենում մի քանի օրվա ընթացքում այդքան ստուգում անցկացնել, նամանավանդ, որ հանձնաժողովի անդամները փորձագետներ չեն: Ավելին, բնակիչները հաճախ վախենում են անկեղծորեն ասել, իրենք ստորագրել են տվյալ կուսակցության համար, թե ոչ, հաճախ, չզիտեն անգամ, թե ում համար են ստորագրել: Սա ևս օրենքի թերություններից է, որը կուսակցություններին ստիպում է գնալ կեղծիքների: Այն հետագայում նույնպես օրենքից պետք է հանվի:

Մտցված է գրավի գաղափարը, ինչը թույլ է տալիս ընտրությունները զերծ պահել պատահական մարդկանցից: Ըստ կարգի, եթե թեկնածուն կամ կուսակցությունը չի հավաքում ձայների որոշակի տոկոս, նա գրավը հետ չի ստանում:

Ինչ վերաբերում է համամասնականի և մեծամասնականի հարաբերակցությանը, ապա խորհրդարանն, ի վերջո, ընդունեց 75 մեծամասնական և 56 համամասնական տարբերակը: Բուռն քննարկումներ ծավալվեցին ու դժվար է ասել, թե որն է ավելի ժողովրդավարական տարբե-

րակ: Տարբեր երկրներում կիրառվում են տարբեր եղանակներ: Օրինակ, ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում մեծամասնական մեկ փուլանոց համակարգն է, Ֆրանսիայում մեծամասնական երկու փուլանոց ձևն է, որոշ դեպքերում պահպանվել են ոչ ուղղակի՝ ընտրիչների միջոցով ընտրությունները: Եվրոպական շատ երկրներում ընտրություններն անց են կացվում համամասնական կարգով: Վերջինս շատ ավելի ճիշտ է տալիս քաղաքական հայացքների այն պատկերը, որոնք կան հասարակության մեջ: Եթե փոքր հեղինակությամբ կուսակցությունների համար դրված չլիներ 5% սահմանը, ապա արդյունքում խորհրդարանում կունենայինք քաղաքական ներկայացուցիչի ճիշտ պատկերը: Սակայն մեծ թվով կուսակցություններից կազմված նման խորհրդարանը դժվար կաշխատեր:

Հայաստանում մենք որոշակի դժվարություններ կունենանք, եթե ընտրություններն ամբողջովին անցնեն մեծամասնական կարգով: Որքան շատ է ընտրատարածքների թիվը, այնքան դրանցում փոքր է ընտրողների քանակը: Փոքր ընտրատարածքներում հեշտ է անցնել տեղական հեղինակություններին, ոչ կուսակցական գործիչներին:

Ցավոք, մեր կուսակցությունները և հասարակությունը չեն հասել այն մակարդակին, որ քաղաքական ծրագրերի մրցույթ լինի: Հաճախ, դա ավելի շատ առանձին խոստումների մրցույթ է: Հետագայում, երևի կհասունանանք այնքան, որ կլինի քաղաքական հայացքների, ծրագրերի մրցակցություն:

ՀԱՐՅԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

-Ներկայումս բոլորը միանշանակ պնդում են, որ ընտրությունների համակարգը մեզանում վարկաբեկված է և դրանով են բացատրում քաղաքացիների քաղաքական ակտիվության անկումը: Ինչպիսի՞ն է ձեր կարծիքը, իրո՞ք համակարգը վարկաբեկված է:

-Եթե համեմատենք 1990 թվականի հետ, բացի վարկաբեկված լինելուց, շատ հեշտ է տեսնել, թե այն ժամանակ ինչպես էին անցկացվում ընտրություններն, ինչպիսի չափանիշներ, գնահատականներ կային, ինչպիսի արժեքներով էր ղեկավարվում ընտրողը: Իրոք, մեծ տարբերություն կա: 1990 թվականի Գերագույն խորհրդի ընտրությունների ժամանակ որոշ ընտրատարածքներում ընտրողն ավելի շատ նայում էր ոչ թե իր անձնական շահին, այլ ընդհանուր ազգային խնդիրներին: Այն ժամանակ առաջնային էին Ղարաբաղի, անկախության պրոբլեմները: Ներկայումս մեր ընտրողների մտածելակերպը փոխվել է, անցել է երբեմնի մեծ ակտիվությունը, շարժումը, ինչը բնական է: Միշտ չէր կարող այդպիսի պաթոս լինել, դա անցումային շրջան էր:

Ինչ վերաբերում է ընտրական համակարգի վարկաբեկմանն, ապա այստեղ մեծ դեր ունի հանձնաժողովների անկողմնակալությունը: Ես սկզբից էլ դեմ եմ եղել հանձնաժողովները կուսակցական ներկայացուցիչներից կազմավորելուն: Սա իրավական մարմին պետք է լինի, որովհետև օրենքը պետք է պահի: Դա նույն դատարանն է կամ դատախազություն է, որը ղեկավարվում է ընտրական օրենսգրքով: Եթե ղեկավարվելու է ընտրական օրենսգրքով, ապա այն չպետք է կուսակցականացված լինի: Ցավոք, մեր նոր օրենսգրքում մեկ քայլ հետ է կատարված. կուսակցությունը

կարող է հանձնաժողովի կազմից հետ կանչել իր նշանակած թեկնածուին: Դա նշանակում է, որ այն անդամները, որոնք նշանակված են կուսակցությունների կողմից, պետք է կուսակցության գիծը իրականացնեն: Եթե նրանք փորձեն շարժվել օրենքով, այլ ոչ թե կուսակցության հրահանգներով, ապա նրանց հետ կկանչեն, կփոխեն: Սա հստակ գրված է նաև ԵԱՀԿ ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների գրասենյակի պահանջների մեջ, որտեղ նշվում է, որ եթե անգամ հանձնաժողովները կազմվում են կուսակցության ներկայացուցիչներից, ապա այդ անդամներին կուսակցությունները չպետք է իրավունք ունենան ետ կանչելու: Բնական է, որ եղած համակարգը միշտ կբերի ընտրությունների վարկաբեկման:

Պետք է ընտրություններն անցկացնել հնարավորին չափ թափանցիկ, հրապարակային: Եթե 1996 թվականի ընտրությունները համեմատեք 1998

թվականի ընտրությունների հետ, ապա հրապարակայնության մեծ տարբերություն կնկատեք: 1996 թվականին մեր ԿԸՀ կազմավորվեց անմիջապես ընտրություններից առաջ, օրենքը նոր էր ընդունվել, և շատ դժվար էր նոր օրենքով ընտրություններ անցկացնել: Ամեն ինչ նոր էր, պետք էր նորից բոլոր գործողությունները իմանալ, ընդունել որոշումներ: Եթե համակարգն արդեն մեկ անգամ փորձարկված է լինում, ամեն ինչ շատ ավելի կարճ էր ժամկետը, բայց մենք կարողացանք ընտրություններն անցկացնել շատ ավելի հրապարակային: Եթե 1996 թվականի ընտրությունների ժամանակ մենք ունեինք այնպիսի կարծիք, որ տեղամասերում, անգամ մարզային հանձնաժողովներում փոփոխ-

«... եղած համակարգը միշտ կբերի ընտրությունների վարկաբեկման:»

վել են տվյալները, ապա 1998-ին աշխատեցինք անմիջապես հրապարակել տեղամասային ընտրական հանձնաժողովների տվյալները՝ տեղամասերում անմիջապես տրվում էր արձանագրության պատճենը: 1998 թվականին չեղավ որևէ բողոք այն մասին, որ վստահված անձանց, դիտորդներին չեն տրվել տեղամասային հանձնաժողովի արձանագրության պատճեն: Միևնույն ժամանակ անմիջապես այդ արձանագրությունները ֆաքսով ուղարկվում էին ԿԸՅ և այդ տվյալները նույնպես հրապարակվում էին անմիջապես, այդ թվում նաև ինտերնետով:

Օրենքով, մենք պետք է սպասեինք 5 օր, որպեսզի մարզային հանձնաժողովները ամփոփեին, բերեին արդյունքները: 1998 թվականին մենք կարողացանք ընտրական տեղամասերի արդյունքները վերահսկել անմիջապես դրանք ամփոփելուց հետո: Արդյունքների հրապարակման գործում մեզ շատ օգնեցին միջազգային կազմակերպությունները: 1998թ. մենք ոչ մի բողոք չունեցանք, թե մեզ մոտ եղած արձանագրությունների տվյալները չեն համապատասխանում մինչ այդ ստացված համապատասխան արձանագրությունների պատճեններում եղած տվյալներին: Բոլոր ավելի քան 1600 տեղամասերի տվյալները մենք CD սկավառակով բաժանեցինք բոլոր ցանկացողներին, բաժանվեցին բոլոր արձանագրությունների պատճենները: Թեև ոմանք ինձ մեղադրում էին, թե հրապարակելով այդ տվյալները, օրենքից շեղվում եմ: Ահա թե ինչու մենք պնդեցինք, որ նոր օրենսգրքում ընտրությունների հրապարակայնության ապահովումն անբազրվի:

Բացասական դրսևորում էին կտրոնները, որոնք ձգձգում էին ընտրությունների արդյունքների ամփոփումը, դրանով իսկ տեղիք տալով զանազան կասկածների: Ուստի, բացի հրապարակայինից, արդյունքները պետք է շատ արագ ամփոփվեն: Ընտրական համակարգը, հատկապես մեր նման հասարակության մեջ, պետք է թափանցիկ դարձնել, այդ գործընթացում հնարավորինս լայն խավեր ներգրավել:

Ցանկացած կենտրոնական ընտրական հանձնաժողով, ումից էլ այն կազմված լինի, հնարավորություն չունի Չայաստանի 1600 և արտասահմանյան դեսպանատներում ու հյուպատոսարաններում տեղակայված տեղամասերում վերահսկել ընտրությունների ընթացքը: Յուրաքանչյուր ընտրական հանձնաժողով ունի իր լիազորությունների շրջանակը, աշխատում է ինքնուրույն: Ստորադաս օղակները ենթակա չեն վերադասին: Վերջինս տեղական հանձնաժողովների աշխատանքները կարգավորում է միայն որոշումներ, ենթաօրենսդրական ակտեր ընդունելով: Տեղերում ընտրությունների ընթացքին հետևելը ժողովուրդը պետք է իր վրա վերցնի: Եթե նախկինում միայն ԱԺ ընտրությունների ժամանակ կար տեղական դիտորդների ինստիտուտն, ապա այժմ տեղական ու նախագահական ընտրությունների համար էլ է այն մտցված: Դա շատ կարևոր ինստիտուտ է: Յուսանք, որ այն ապագայում կկայանա, քանի որ այսօր մտավախություն կա, թե շատ հասարակական կազմակերպություններ դիտվում են որոշ քաղաքական ուժերի կցորդներ:

-Չայտնի է հետևյալ ստույթը. «Կարևոր չէ, թե ով ինչքան ծայն է հավաքել, կարևոր է թե ովքեր են դրանք հաշվում»: Ըստ Ձեզ, որքանով է արդիա-

կան այս արտահայտությունը մեր իրականությունում:

-Նշել եմ, որ հանձնաժողովները պետք է կազմված լինեն չեզոք մարդկանցից: Եթե հանձնաժողովի անդամները շահագրգիռ են, ապա այն ուժը, որը մեծամասնություն ունի, կարող է անզամ չհաստատել ընտրությունների արդյունքները:

Այսօր մենք ունենք հանձնաժողովներ, որոնք ներկայացնում են կուսակցություններ, ուստի և՛ շահագրգիռ են: Ստացվում է մի փոքր խորհրդարան, որտեղ անդամները կարող են միմյանց հետ բլոկներ կազմել: Բնական է, այս պայմաններում շատ ավելի դժվար է արդար ընտրություններ անցկացնել, քան եթե լինեին չեզոք մարդիկ, որոնց շահը կլիներ միայն արդար ընտրությունների անցկացումը:

Կան կուսակցություններ, մեծամասնականով առաջադրված թեկնածուներ, որոնք հանձնաժողովի անդամներ չունեն, սակայն կարող են ունենալ վստահված անձինք: Եթե վերջիններս իսկապես աչալուրջ են, ապա ոչ մի կեղծիք անել հնարավոր չի լինի:

Ցավոք, մենք չունենք պետական ծառայություն: Եթե հետագայում մեզ մոտ լինեն պետծառայողներ, որոնք ցմահ աշխատելու են, կախված չեն լինի քաղաքական կոնյուկտուրայից, ապա հնարավոր կլինի հանձնաժողովները կազմել չեզոք անձանցից: Այսօր այդ հնարավորությունը չունենք:


-Ներկայիս ընտրական կարգը հնարավորություն տալի՞ս է իշխանություններին ազդել ընտրությունների ընթացքի վրա: Եթե այո, ապա իշխանության ո՞ր թևը ներազդեցության ավելի մեծ հնարավորություն ունի:

-Ինչ խոսք, իշխանությունն ավելի մեծ հնարավորություններ ունի, սակայն բոլոր քաղաքական ուժերն էլ կարող են ազդել ընտրությունների արդյունքների վրա: Գործող օրենքը թույլ է տալիս փոփոխել տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմը: Սա այս կամ այն թեկնածուին հնարավորություն է տալիս իր օգտին գործող հանձնաժողովի կազմ ձևավորել: Ընդ որում, պարտադիր չէ, որ դա լինի իշխանության թեկնածուն: Չգիտեմ, թե ինչ մեխանիզմով է այդ առևտուրն ընթանում, սակայն կարգը թույլ է տալիս նման փոփոխություններ անել:

Սա ընդհանուր հարց է, և խնդիրն այն է, թե որքանով է մեր հասարակությունը հասունացել ժողովրդավարության համար: Դիտարկումները ցույց են տալիս, որ այս կամ այն երկրում ընտրություններն անցնում են այնքան արդար, որքան ժողովրդավարության համար հասունացած է այդ հասարակությունը: Եվրոպական շատ երկրներում չկան վստահված անձինք, հարկ չկա ունենալու քվեախցիկներ: Քվեարկությունն այնտեղ անցկացվում է համակարգիչներով, ցանկացած մեկը կարող է նայել, օպերատորները նկարահանել և այլն: Այդ հասարակություններում ընտրողների կամքի վրա ազդեցություն չկա:

-Կարո՞ղ եք նշել, թե ստուգված 65000 ստորագրությունից քանի՞ տոկոսն էր անվավեր:

- Ցավով պետք է նշեմ, որ մենք 65000 ստորագրություն չենք կարողացել ստուգել: Մեր ներկայացուցիչները շրջաններով, գյուղերով գնում էին, սակայն, չկարողացանք մի քանի օրվա ընթացքում այդքան թվով ստուգում անցկացնել, դա ֆիզիկապես



ԲԱՆԱԽՈՍ

1999 05 26

ԹԻՎ 27

1999 05 13

ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԽԱՉԱՏՈՒՐ ԲԵԶԻՐՉՅԱՆ

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախկին նախագահ, Կառավարման դպրոցի տնօրեն

Ժողովրդավարական ցանկացած երկրում ընտրությունները ժողովրդավարության ամենակարևոր տարրերից են: Անգամ ոչ ժողովրդավար երկրներում այսօր ընտրություններ են կազմակերպվում: Կան ընդհանուր մշակված սկզբունքներ, որոնք ամրագրված են Մարդու իրավունքների հռչակագրով, ՀՀ սահմանադրությամբ: Ըստ դրանց, բոլոր քաղաքացիները հավասար իրավունք ունեն մասնակցելու իրենց երկրի կառավարմանն անմիջականորեն կամ իրենց ընտրած ներկայացուցիչների միջոցով, ուստի պարբերաբար պետք է անցկացվեն ընտրություններ: Այդ սկզբունքների հիման վրա կազմվել է ՀՀ ընտրական համակարգը:

Ներկայումս գործող ՀՀ ընտրական համակարգի հիմքերը դեռևս գալիս են խորհրդային շրջանի օրենքից, որից ժամանակի հետ զնալով հեռանում ենք: Խորհրդային փուլում, մինչև 1988 թվականը ընտրությունները կրում էին ձևական բնույթ: Մինչ այդ՝ մեկ թեկնածուի պայմաններում, պատգամավորներն ընտրվում էին 99,8% ձայներով, ավելի ճիշտ՝ նշանակվում էին: Այս եղանակը գործում էր բոլոր մակարդակներում, սկսած ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրություններից, մինչև շրջանային ու տեղական խորհուրդների ընտրությունները: 1988 թվականին ընտրական օրենքը գործեց, և ընտրություններն անցան մեկից ավելի թեկնածուի առկայությամբ: Վերջին գորբաչովյան շրջանում, գործեց ժողովրդական



պատգամավորների համագումարը, որի մեկ երրորդը՝ 750 պատգամավոր, ներկայացնում էին հասարակական կազմակերպությունները: Մնացած 1500 պատգամավորները պետք է ընտրվեին: Հասարակական կազմակերպությունները գտնվում էին կոմկուսի ղեկավարության ազդեցության ներքո, և այդպես էր արված, որպեսզի առնվազն կուսակցական ներկայացուցականությունն ապահովված լիներ: Ըստ այդ օրենքի, ընտրությունները երկու փուլային էին: Առաջինը բացարձակ մեծամասնական էր. պատգամավորը համարվում էր ընտրված, եթե ստանում էր ընտրատարածքի ընտրողների ընդհանուր թվի 50%-ից ավելի ձայներ: Բնական է, եթե իրական ընտրություններ լինեին, այդքան ձայն դժվար էր հավաքել: Ընդ որում, կար նաև քվորումի գաղափարը. ընտրությունները կայացած համարվելու համար դրանց պետք է մասնակցած լինեին ընտրողների 50%-ից ավելին: 1989թ. խորհրդային Միությունում ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրությունները չկայացված համարվեցին Երևանի Սովետական շրջանում: Այն ժամանակ Մոսկվայում ասում էին, թե Երևանի